ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԱԽԹԱԼԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ

---

# Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԽԹԱԼԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ԹԻՎ 78-Ա ՈՐՈՇՈՒՄԻՑ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ի մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ կետով, 33, 34, 37-րդ հոդվածներով, հիմք ընդունելով ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 30.11.2021 թվականի թիվ 405-Ն որոշումը

Ախթալա համայնքի ավագանին որոշում է՝

1.ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի Ճոճկան և Մեծ Այրում բնակավայրերի 1 խորանարդ մետր խմելու ջրի ջրամատակարարման համար, առանց ջրահեռացման, նախկինում սահմանված 1 խմ խմելու ջրի համար սահմանված 153 /հարյուր հիսուներեք/ ՀՀ դրամի փոխարեն սահմանել 171 /հարյուր յոթանասուն մեկ/ ՀՀ դրամ գումար :

2. Ուժը կորցրած ճանաչել Ախթալա համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 11-ի <<ՀՀ Լոռու մարզի Ախթալա համայնքի Մեծ Այրում, Փոքր Այրում և Բենդիկ բնակավայրերի խմելու ջրիվարձավճարի չափ սահմանելու մասին>> թիվ 77-Ա որոշումը և ՀՀ Լոռու մարզի Ճոճկան համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 37-Ա <<Ճոճկան համայնքում ջրաչափեր տեղադրելու, ջրամատակարարման ծառայությունների մատուցման պայմանագրի ձևի հաստատման և խմելու ջրի սակագնի սահմանման մասին>> որոշման 2 կետը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Իսկականի հետ ճիշտ է՝**

**Աշխատակազմի քարտուղար՝** Ա.Մուսինյան